



**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA**  
**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ**

**Archbishop Khajag Barsamian, Primate**

Թի 2054  
 Ապրիլ 28, 1995

**Հոգեշնորհ**  
**Տ. Նարեկ Վրդ. Պերպերեան**  
**Հովի Ա. Խաչ Եկեղեցոյ**  
**Նախագահ Ծխական Խորհուրդի**  
**Ռիչմոնտ.**

**Սիրելի Հայր Նարեկ,**

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Ապրիլ 7, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 19, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի երեք անդամներ:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

**Ազնի Ամիրխանեան**  
**Յակոբ Պերպերեան**  
**Նեայի Պոյաճեան**

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անուանները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Տարեկան Ժողովի դիւանի, Ծխական Խորհուրդի, ինչպէս նաեւ որեւէ յանձնախումբի ընտրութիւնը պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ եւ երկպատիկ ցանկի վրայէն: Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Ատենադպիրին կողմէ եւս: Համայնքդ «Լուսա»յի հաշույն պարտական է 340.00 տոլար:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

*Khajag Barsamian*

**ԽԱՇԱԿ ԱՐՔ. ՊԱՐՄԱՄԵԱՆ**  
**Առաջնորդ**

Messian Revist



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

SAINT JAMES  
ARMENIAN CHURCH



V. REV. FR. NAREG BERBERIAN

Յունուար 29, 1996

Պերջ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան  
Առաջնորդ  
Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի

Պերաշնորհ Սրբազան Հայր,

Ձերք Սրբազնութեան հրահանգով Յունուար 21, 1996-ին առաջին անգամ ըլլալով Սր. Պատարագ մատուցի Ծարլոթ, Նորթ Գարոլայնայի մէջ: Ներկայ էին 125 անդամներ որոնք եկած էին անհանգի զանազան շրջաններէ իրենց մասնակցութիւնը բերելու: Ծարաթ, Յունուար 20-ին մասնաւոր հանդիպում մը ունեցալ կազմակերպիչ յանձնախումբին հետ: Միաբերան որոշեցին ստեղծել հայ համայնքային կեանք եւ մաս կազմել Հիւսիսային Արեւելեան Թեմին:

Ձեր խորհրդով զանոնց պաշտօնի հրաւիրեցի եւ նշանակեցի ծիական խորհուրդի եօթ անդամներ: Անոնց ուշադրութեանը հրաւիրեցի որ Առաջնորդ Սրբազան Հօր վաւերացումէ ետք անոնք պաշտօնապէս պիտի ճանչցուին թէ որպէս Ծիական Խորհուրդի անդամներ եւ թէ «Ծարլոթի Հայ Համայնք»: Նոյն օրը որոշեցինք Ապրիլ 14-ին կատարել մեր երկրորդ հանդիպումը:

Հետեւեալ անձինք նշանակեցի Ծիական Խորհուրդին մէջ.

- |                  |                        |
|------------------|------------------------|
| Լենա Գոբելեան Նօ | ատենապետուհի           |
| Էտուարդ Ազարեան  | փոխատենապետ            |
| Քէյմընտ Օգօեան   | Փանձապահ               |
| Նօէլ Սարգիսեան   | Փանձապահի օգնական      |
| Կրէյա Սուզիեր    | Քարտուղարուհի          |
| Օլիա Պօլոյեան    | Քարտուղարուհիի օգնական |
| Լօրա Արսլանեան   | խորհրդատու             |

Պերաշնորհ Սրբազան Հայր, եթէ նկատի ունի՞ք զիս նշանակել Ծարլոթի այցելու հովի, պիտի խնդրեմ Ձեզմէ որ գրաւոր կերպով տեղեկացնէք այս մասին թէ Քիշմընտի Ծիական խորհուրդին եւ թէ նորակազմ Ծարլոթի համայնքին:

Ընդունեցէք իմ անկեղծ եւ ջերմ բարեմաղթութիւնները:

Մատչիմ ի համբոյր Ձերք Սր. Աջոյն

Խոնարհաբար

*Նարեկ Ջոյ. Պերպերեան*

Նարեկ Վարդապետ Պերպերեան  
Հոգեւոր Հովի



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2329

Ապրիլ 10, 1996

Հոգեշնորհ  
Տ. Նարեկ Վրդ. Պերպերեան  
Հովի Ա. Խաչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Ռիչմոնտ

Սիրելի Հայր Նարեկ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 26, 1996 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 25, 1996-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Ծան Պարոնեան  
Տոբթ. Մուրատ Գըրնեքլեան  
Բայ Նորիս  
Տոբթ. Նուպար Օզպալիք

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Անդամական Ժողովին ներկայացուած Հովիին Տեղեկագիրը չէ ստորագրուած ձեր կողմէ, ինչպէս նաեւ Ծխական Խորհուրդի Տեղեկագիրը չէ ստորագրուած Հովիին, ատենապետին եւ ատենադպիրին կողմէ: Բարի եղէք ստորագրուած տեղեկագիրներու օրինակները ղրկել Առաջնորդարան:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

*Խաչնայ Արք. Բարսամյան*

ԽԱՇԱԿ ԱՐԶ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ



SAINT JAMES  
ARMENIAN CHURCH

V. REV. FR. NAREG BERBERIAN

Հոկտեմբեր 3, 1996

Գերազանրո՞ Տ. Խաժակ Արք. Պարսամեան  
Առաջնորդ  
Հիւսիսային Ամերիկայի Հայոց Թեմի

Գերազանրո՞ Սրբազան Հայր,

Իմ խորին շնորհակալութիւններս կը յայտնեմ Ձերո՞ Սրբազանութեանը որ Ձեր այցելութեամբ հոգեկան խարդավարութիւն ստեղծեցիք Սր. Յակոբ Հայաստանեայց Եկեղեցոյ հարկէն ներս:

Նորաստեղծ երիտասարդաց խումբը տակաւին մեծ ոգեւորութեամբ կը պատմեն Ձեր մասին: Անոնք առաջին անգամ ըլլալով հանդիպեցան հայ բարձրատիճան եկեղեցականի մը: Դուք շնորհեցիք անոնց հոգեկան մեծ բարարարութիւն: Ձեր իմաստութիւնը պատճառ հանդիսացաւ ծանօթանալու հայ եկեղեցոյ կեանքին ու գնահատելու հայ եկեղեցոյ կատարած դերը Ամերիկայի Արեւելեան Թեմէն ներս:

Կիրակի առաւօտեան Ձեր աղօթքներն ու հայրական խօսքերը կակղացրին մեր սիրտերն ու հոգիները ու մեզ նոր շունչ ու եռանդ շնորհեցին շարունակելու մեր առաքելութիւնը: Ապա պատին ունեցանք լսելու Ձեր պատգամը Սր. Յակոբ Եկեղեցոյ 40 ամեակի առթիւ:

Սրբազան Հայր, Ձեզ կը մաղթեմ քաջատողջութիւն ու արեւշատութիւն: Դուք ինձի համար եղած էք ճշմարիտ հոգեւորականի տիպար: Մեր եկեղեցին պէտք ունի Ձեր նման նուիրեալ հայրերու որոնք կապրին հաւատքով, կը ծառայեն սիրով, ու կը գործեն տեսիլքով:

Մատչիմ ի համբոյր Ձերո՞ Սր. Աջոյն:

Խոնարհաբար

Նարեկ Վարդապետ Պերպերեան

Նարեկ Վարդապետ Պերպերեան  
Հոգեւոր Հովի